

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9895

1924

334.63

2-24

Հրատարակութիւն Հայաստանի Ս. Խ. Հ. Գյուղատնտեսական
Կոոպերացիայի Միութեան — «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-ի:

**ՈՐԻՆԱԿԵԼԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԱՌԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

334.63

Z-24

2001

Լեւոնակների Տեղ. Տնտ. բաժնի տպարան
1924 թ.

2010

40912-սկ

334.63
2-24

Հ. Ս. Խ. Հ.

Հրատարակություն «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-ի

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ Խ Ա Ռ Ը ԿՈՊԵՐԱՏԻՎ
Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Յ Ա Ն

Հայաստանի Տեղ. Տնտ. բանի տպարան
1924 թ.
ՀԱՅԿԵՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՇԱԿՅԱՆ
Անգան
Публичная Библиотека

(943
44)

23893-60

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԱՌԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԳԶԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Գյուղատնտեսա-
կան խառը կոոպերատիվ ընկերությունը հիմնվում է
..... գավառի
..... շրջանի գյուղում
*կարչության կենտրոնաեղը..... :

2. Գյուղատնտեսական Ընկերությունն իրան նը
պատակ է զնում նպատակել իր անդամների գյուղա-
տնտեսական արտադրությունների զարգացմանը. ա)
մատակարարելով նրանց գյուղատնտեսություն համար
անհրաժեշտ բոլոր պարագաները. բ) կազմակերպելով
նրանց աշխատանքի արտադրությունների սպառումը
ու վերամշակումը. գ) վարկավորելով անդամների տըն-
աեսությունն ու ժեղացնելու և բարելավելու նպատա-
կով և դ) իր գործունեության շրջաններում տարածե-
լով Գյուղատնտեսության վերաբերյալ գիտելիքներ:

3. Մատնանշված նպատակին հասնելու համար
ընկերությանը վերապահվում է իրավունք. ա) ձեռք
բերել ընկերության և նրա անդամների համար ուն-
հրաժեշտ գործիքները, մեքենաները, անասունները,
ուերմերը և գյուղատնտեսական արտադրություն մյուս

4

պարագաները՝ կազմակերպելով այդ նպատակների համար գործարաններ, արհեստանոցներ, սերմարուծական և ցեղական տնտեսութիւններ, անկարաններ, բանջարանոցներ, այգիներ, ֆերմաներ, մեղվանոցներ և այլ ձեռնարկներ. բ) բանալ վարձատու հացահատիկների զտող վերասառուգման և բեղմնավորման կայաններ. գ) սպառելիքի անդամների աշխատանքի արդյունքները, պահելով պահեստներ, գրասենյակներ, նմանապես միջերջները վերաճական համար գործարաններ ու արհեստանոցներ. դ) ստանալ փոխառութիւններ կոոպերատիվ և հասարակական հիմնարկութիւններէից, վարկավորել իր անդամներին նրանց տնտեսութիւնները պահպանելու և բարելավելու նպատակով. զ) մշակել միջոցներ իր անդամների տնտեսութիւնները բարեկարգելու համար, և) տարածել գյուղատնտեսական գիտելիքներ, դասնթացքների, դասախոսութիւնների, գրողարանների, ցուցադաշակելի կազմակերպման միջոցով և այլն. բ) հիմնել անդամների փոխադարձ ոգնութեան ղրամարկղներ, հիվանդութեան, հաշմանդամութեան, մահվան, անասունների համաճարակի դեպքերի համար և թ) առհասարակ ձեռք առնել բոլոր համապատասխան միջոցները, հոգ. 2-ի մեջ մատնանշված նպատակներին լրովագոյն կկրպով հասնելու համար:

4. Ընկերութիւնը իրավունք ունի բոլոր սրինական միջոցներով գնել և ոտարել գույքեր, կապիչ պայմանագրեր, ստանձնել սարտավորութիւններ, հարուցանել հայցեր և պատասխանատու լինել դատարանի առաջ: Ընդունել նվիրաբերութիւններ և առհասարակ վայելել իրավաբանական անձի բոլոր իրավունքները:

5. Ընկերութեան պատամուրհակները ապահով-

վում են նրան պատկանող բոլոր շարժական ու անանշարժ ստացվածքով ու ղրամագլուխներով, նայել նրա անդամների ստացվածքով յուրաքանչյուր մի անգամի մտցրած պարտաղիք փայա վճարները:

պաիկ չափով:

6. Ընկերութիւնն իրավունք ունի միութիւն կազմել ուրիշ կոոպերատիվ կազմակերպութիւնների հետ և անդամագրվել Գյուղատնտեսական կոոպերացիայի միութեան «Գյուղմիութեան»:

7. Ընկերութիւնն ունի իրա անվանական կընիքը:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԳԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆԵՐՆԵՐԸ, ՊՍՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

8. Ընկերութեան անդամ կարող են լինել 18-տարեկանից վոչ պակաս յերկու սեռի անձեր, վորոնք խորհուրդների ընտրութեանը մասնակցում են և վորոնց իրավունքները սահմանափակված չեն դատարանով:

Նմանապես անդամ կարող են լինել այն իրավաբանական անձերը, ընկերութիւնները, միութիւնները, արտելները և այլն, վորոնք գտնվում են ընկերութեան գործունեութեան շրջանում:

9. Ընկերութեան անդամներ չեն կարող լինել այն անձիք, վորոնք արդեն մտել են մի ուրիշ նույնանման Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերութեան մեջ:

10. Ընկերութեան անդամների ընդունելութիւնը կատարում է ընդհանուր ժողովը, վորը կարող է հանձնարարել նախնական ընդունելութիւնը վարչութեանը,

վերապահելով վերջնական վավերացումը ընդհանուր ժողովին:

11. Ընկերութեան ամեն մի անդամը պարտավոր է վերցնել առնվազն մի փայ, նմանապես մրացնել մուտքի վճար համաձայն հոդ. 25-ի. բայց ինչքան փայ ել վոր ունենա անդամը նա սպալում է միայն մի ձայնի իրավունքով:

12. Ընկերութեան մեջ ժանելիս, նրա յուրաքանչյուր անդամը ստորագրութեան է տալիս, վոր նա պարտավորվում է կատարել ընկերութեան կանոնադրութեան պահանջները, հանձն է առնում պատասխանատվութեան ընկերութեան պարաքերի համար, համաձայն սույն կանոնադրութեան հոդ. 2-ի, նմանապես, վոր նա չի մասնակցում մի ուրիշ նույնանման ընկերութեան:

13. Ընկերութեան մեջ մտնողը պատասխանատու է ընկերութեան այն պարաքերի համար եւ վորոնք առաջացել են մինչև իրա անդամ դառնալը:

14. Ընկերութեան յուրաքանչյուր անդամ իրավունք ունի դուրս գալ ընկերութեան ից, տալով այդ մասին զրավոր հայտարարութեան: Հեռանալու որը համարվում է շրջանառութեան տարվա վերջին որը, յեթե հեռացող անդամը հայտնել է ընկերութեան ից հեռանալու իր դիտավորութեան մասին առնվազն այն տարին լրանալուց յերեք ամիս առաջ: Հակառակ դեպքում հեռանալու որը համարվում է հաջորդ շրջանառութեան տարվա վերջը:

15 Մեռնող անդամի ընկերութեան ից հեռանալու որը համարվում է այն շրջանառութեան տարվա վերջին որը, վորի ընթացքում նա վախճանվել է: Մինչև այն ժամանակամիջոցը լրանալը մեռածի ստացվածքային իրավունքները ու պարտավորութեանն:

որը իրագործում են նրա իրավահաջորդները: Ինչ վերաբերում է անդամի իրավունքին, մասնակցելու ընդհանուր ժողովներին և ընկերութեան ընտրութեանը և այլն, իրավահաջորդներին նա չի անցնում:

16. Ընդհանուր ժողովի վորոշմամբ ընկերութեան ից կարող են արտաքսվել նրանք, ովքեր չեն կատարում իրանց պարտավորութեանները ընկերութեան առաջ, ով վարվում է հակառակ ընկերութեան կանոնադրութեան ու որինական պահանջներին, կամ առհասարակ, գործում է ի վնաս ընկերութեան:

17. Արտաքսված անդամի ընկերութեան ից հեռանալու որը համարվում է շրջանառութեան տարվա վերջին որը, բայց ընդհանուր ժողովներին մասնակցելու կամ ընկերութեան մեջ վորչեվ պաշտոն ստանձնելու իրավունքից արտաքսվածը զրկվում է այն ուրից, երբ նա ստացել է իրան արտաքսելու մասին ծանուցագիր:

18. Հոդ. 16 ի հիման վրա արտաքսված անդամը կարող է վերընդունվել ընկերութեան մեջ միայն ընդհանուր ժողովի վորոշմամբ:

19. Ընկերութեան յուրաքանչյուր անդամը մյուս բոլոր անդամներին հետ միասին կրում է լրացուցիչ պատասխանատվութեան ընկերութեան պարաքերի համար: Այդ պատասխանատվութեանը կայանում է նրանում, վոր ընկերութեան ամեն մի անդամը, յերբ ընկերութեան ստացվածքները ու գրամապուհները իր պարաքերը հանդցնելու համար չի բավարարում, լրացուցիչ պատասխանատվութեան է վերցնում իրա ստացվածքով, միայն թե վոչ ավելի այն գումարից, վորը հավասարվում է պարտադիր փայտվճարի պատիկ չափին:

20. Ընկերութեանից հետացած կամ հեռացրած անդամները կամ նրանց իրավահաջորդները մի տար- վա ընթացքում, հաշվելով դուրս գալու որից, մյուս անդամների հետ հավասարապես պատասխանատու են ընկերութեան այն պարտքերի համար, վերոնք սու- ջացել են մինչև նրանց հեռանալը:

21. Ընդհանուր ժողովի կողմից այն շրջանառու- թեան աարեհաշիվը հաստատելուց յերեք ամիս հետո, վորի ընթացքում անգամը հեռացել է, նրա կամ նրա իրավահաջորդներին վերադարձվում է նրանց փայա- վճարները, դուրս գալով նրանց բաժին ընկնող վնաս- ները, կամ ավելացներով՝ նրան հասնող վաստակը: Բացի վերոհիշյալ փայավճարներից ընկերութեան ան- գամը իրավունք չունի ստանալու ընկերութեան դրա- մապուլսներից կամ ստացվածքից վորչեվի բաժին:

22. Այն դեպքում յերբ ընկերութեանը փակվում է կամ հեռացող անդամների ձեռքից ընկերութեան պարտքերի համար հանձն ստած պատասխանատու- թեան ժամկեաը լրանում է, հեռացող անգամը կամ նրա իրավահաջորդները վայելում են լիկվիդացիայի դեպ- քում գույքային իրավունքը և պատասխանատու են ընկերութեան պարտքերի գիմաց՝ մնացյալ անդամների հետ հավասարապես:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

23. Ընկերութեան միջոցներն են. հիմնական, պա- հեստի և հատուկ գրամադրուխներ:

24. Հիմնական գրամադրուխը կազմվում է. փա- յավճարներից, նվիրարերութեաններից, այդ նպա- տակների համար փոխ-առած գումարներից, նմանա- պես ընդհանուր ժողովի վորոշմամբ ընկերութեան գուտ վաստակից արված հատկացումներից:

25. Լրելվ փայը հավասար է..... ուրբու, մուտքի վճարը..... ուրբու: Փայերի քանակը վորը կարող է ունենալ ամեն մի ան- գամ, վորոշվում է ընդհանուր ժողովի կողմից:

26. Անգամը ընկերութեանը անգամադրվելիս մտցնում է լիովին, կամ մաս մաս, ըստ վորում վճա- րումների չափն ու ժամկեաը վորոշում է ընդհանուր ժողովը:

27. Ընկերների փայավճարներից նրա առանձին անդամների պարտքերի ու պարտավորութեանների գիմաց վորեւ գանձումների չեն յենթարկվում: Մին- չև անգամի հեռանալը ընկերութեանից պահանջ- ների առարկա կարող է ծառայել ոգուտի այն մասը, վորը իրավունք ունի պահանջելու ընկերութեան ան- գամն ինքը:

28. Ընկերը վորեւ ձեւով չի կարող յուր փայը ոտալ մի ուրիշին:

29. Մուտքի վճարը չի վերադարձվում մուծող անգամին:

30. Հիմնական գրամադրուխի համար փոխ առնված գումարները, ընկերութեան գործերը գաղարեցնելու դեպքում, ընկերութեան մնացյալ բոլոր պարտքերը վճարելուց հետո, վերադարձվում են պարտատերոջը:

31. Պահեստի գրամադրուխը կազմվում է մուտքի վճարներից գոյացած գումարներից և ընդհանուր ժո- ղովի վորոշմամբ գուտ ոգուտից ու այլ գումարների հատկացումներից և ծառայում է ընկերութեան գոր- ծարքներից առաջացող վնասները հանգցնելուն: Պա- հեստի գրամադրուխը ծախսվում է ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով:

32. Պահեստի գրամադրուխի հատկացվելիք գու- մարների չափերը վորոշում է ընդհանուր ժողովը:

33. Ընդհանուր ժողովի վերջմամբ կարող են կազմվել հատուկ նշանակություն ունեցող դրամագլուխներ: Այդ դրամագլուխները ծախսելու կարգը վերջում է ընդհանուր ժողովը:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

34. Ընկերությունը կատարում է սույն կանոնադրություն 3-րդ հոդվածում մատնանշված գործարքները, ընկերության անդամների համար սպառումը և գնումները կատարվում են, ինչպես նրանց հանձնարարություններ ու նրանց հաշվին, այնպես էլ ընկերության հաշվին:

35. Անդամների հետ գործարքներ կատարելիս ընկերությունը կարող է նրանց համար վարկ բանալ. նույնպես տալ ավանսներ անդամների տալիք միջոցների և նույնների համար և առհասարակ տալիս և նրանց ոժանդակություն իրենց անասությունները պահպանելու և բարելավելու նպատակով:

36. Ընդհանուր ժողովը սահմանում է՝ ա. վերամշակելու նպատակով անդամներից միջերգներ ընդունելու հերթն ու կարգը. բ շրջանառություն տարում ամեն մի անդամի մատակարարումների վեջնակաճ նորման. գ. միջերգների հատկությունը, քանակը, արժեքը և նրանց հետ կապված խնդիրները. գ. անդամներին վարկավորելու և ավանսներ տալու կարգ ու պայմանները. և յե. այլ կանոններ, վերոնք սահմանում են գործարքների կարգը ու անդամների և ընկերության փոխհարարությունները:

V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

37. Ընկերության գործեր վարում են. ա. վարչությունը և բ. անդամների ընդհանուր ժողովը և

խորհուրդը վերջինս ընտրվում է ընդհանուր ժողովի հայեցողությամբ:

VI. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

38. Վարչությունը ընկերություն գործադիր մարմինն է. նա է վարում ընկերության բոլոր գործողությունները, վերոնք նախասահմանված են սույն կանոնադրությամբ: Վարչությունը ներկայանում է վարչական ընկերության լիազոր հավատարմատար հիմնարկությունների և մասնավոր անձանց առաջ, ինչպես նաև անպարտաճանաչ պարտապաններից գանձումներ անելու բոլոր դեպքերում պարտավորությունների և փոխհարարությունների մեջ:

39. Վարչությունը պատասխանատու է ընկերության առաջ ընդհանուր ժողովի ընդունած բոլոր հրահանգների և վերջումների ճշտություններ կատարելու համար:

40 Վարչության պարտականություններն են՝ ա. Մշակել և գործադրել ընկերության գործունեություն բոլոր ճյուղերի համար այն բոլոր վերջումները, վերոնք հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից:

բ. Կրթել պայմանագրեր և պայմաններ, նմանապես փոխառություններ այն դեմքեր սահմաններում ու հիմունքներով, վորը վերջում է ընդհանուր ժողովը:

գ. Պատրաստել ու գնել ընկերության համար անհրաժեշտ բոլոր պարագաները և հսկողություն ունենալ նրանց պահպանություն վրա:

դ. Նշանակել ապրանքների գները ու վաճառել նրանց:

յե. Ապահովագրել տալ ընկերությանը պատկանող նույնպես և վաճառելու համար կամ ուրիշ հի-

ժուռներով նրան հանձնած ապրանքներն ու գույքերը, կատարել ծախքեր ընդհանուր ժողովի հաստատած նախահաշիվով, պահել և ստանալ ընկերութեան գումարները:

դ. Ընդունել, գնահատել, անդամների կողմից ներկայացվող միջոցները, ղեկավարել ընկերութեան ձեռնարկութեանները:

ը. կատարել գանձումներ հոգուտ ընկերութեան և պատասխանատու լինել գատարանում ընկերութեան դեմ հարուցված հարցերի ու վեճերի ժամանակ:

թ. Հրավիրել ու վարձել մտրդիք ընկերութեան գործերով զբաղվելու համար և արձակել նրանց:

ժ. Նախապատրաստել բոլոր գործերը և կազմել նախահաշիվ ընդհանուր ժողովին գեկուցելու համար:

ի. Պահել ընկերութեան բոլոր հաշիվները, գրքերը և գործառնութեանը, կազմել գեկուցագրեր ու տեղեկագրեր և գրագրութեանները բոլոր հիմնարկութեանների և անձանց հետ և

լ. կատարել ինչպես կանոնադրութեանս մեջ նշված, այնպես և ընդհանուր ժողովի վորոշմամբ վարչութեան վրա դրած սյուս պարտականութեանները:

41. Վարչութեան գործերը վարելու ներքին կարգը, նմանապես Վարչութեան առանձին անդամների լիազորութեանների սահմանը և նրանց պարտականութեանների կատարման կարգը, սահմանվում և ընդհանուր ժողովի հաստատած հրահանգով:

42. Վարչութեանը պարտավոր և շրջանառութեան տարին լրանալուց վոչ ուշ քան յերեք ամիս հետո՝ հրավիրել տարեկան ընդհանուր ժողովը վարչութեան կազմած ու վերստուգիչ հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան հաշիվառնութեանը քննելու և հաստատելու համար:

43. Վարչութեան անդամները, վորոնք խախտում են իրանց պարտականութեանները, հավաքականորեն պատասխանատու են իրանց ամբողջ կայքով այն բոլոր վնասների համար, վորը նրանք պատճառել են ընկերութեանը: Սրանից անկախ՝ նրանց հավաստե նական արարքների ու զանցառութեանների համար յենթարկվում են պատիժների քրեական որոնքների համաձայն:

44. Վարչութեանը բաղկացած և անվազն յերեք անդամից, վորոնց ընտրում և ընդհանուր ժողովը մի տարի ժամանակով: Նույն կարգով ընտրվում են յերկու թեկնածուներ:

Մակրուրյուն. Վարչութեան կազմի մեջ չեն կարող մտնել մինչև յերկրորդ աստիճանը ազգակցութեան ունեցող ազգականները:

45. Վարչութեանն ընտրում և իր միջից նախագահ, վորին նախագահ և գանձապահ: Յեթե հաշիվադատութեանը հանձնված կլինի տանելու վարչութեան անդամներից մեկին, այդ գեպքում նույն անդամին չի կարելի հանձնել գանձապահի պարտականութեանները:

46. Վարչութեան նիստերը համարվում են կայացած, յեթե նրան ներկա յեն յեղել անդամների ընդհանուր թվի կեսից վոչ պակաս: Վարչութեան նիստերը տեղի յեն ունենում անվազը շաբաթը մի անգամ:

47. Վարչութեան մեջ գործերը վճարվում են ձայների հասարակ մեծամասնութեամբ: Վարչութեան վորոշումները մուծվում են գրքի մեջ և վավերացվում ներկա յեղող անդամների ստորագրութեամբ:

48. Վարչութեան վորեկ անդամի հիվանդութեան կամ բացակայութեան գեպքում, նրա տեղը բռնում և

այն թեկնածուն, վորը ամենից ավելի և ընտրողական ձայներ ստացել:

49. Վարչության դեմ յեղած գանգառները ուղղվում են խորհրդին, իսկ խորհուրդ չլինելու՝ դեպքում ընդհանուր ժողովին:

VII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

50. Ընդհանուր ժողովին և վերաբերում.

ա. Վարչության, խորհրդի, վերստուգիչ և լիկվիդացիոն հանձնաժողովների, ընկերության լիազորների և նրանց անձնափոխանորդների ընտրությունները:

բ. Կանոնադրության փոփոխությունների և լրացումներին վերաբերող հարցերի լուծումը:

գ. Վարչական մարմինների համար մշակված հրահանգների ու կանոնների քննությունն ու հաստատումը՝

դ. Հաշվետվությունների ու նախահաշիվների քննությունը ու հաստատումը և վստակի ու վնասների բաշխումը:

լ. Ընկերության գործողությունները դադարեցնելու հարցի քննությունը:

յ. Ընկերության գործունեությանը վերաբերող հարցերը մշակելու համար հանձնաժողովներ կազմելը:

ը. Գործարքների և փոխառությունների վորոշումը:

թ. Ընկերության գործողությունների շրջանի վորոշումը:

ժ. Փայերի և ընկերության հատուկ զբաղմունքների մեջ մուծած գումարների վճարման կարգը սահմանելը:

ի. Վարչության դեմ ընդհանուր ժողովին ներ-

կայացրած գանգառների լուծումը,

լ. Վարչության և խորհրդի անդամների կողմից կատարված գանցառությունների և անկանոն արարքների վերաբերյալ հարցերի քննությունը և իւր ընդհանրապես այն բոլոր հարցերի քննությունը, վորոնք վեր են վարչության իրավասությունից:

51. Ընդհանուր ժողովները հրավիրվում են վարչության կողմից տարեկան ամսվա ընթացքում մի անգամ, բացի դրանից ընդհանուր ժողովը գումարվում և հարկ յեղած դեպքում վարչության և խորհրդի վորջմամբ, ընկերության անդամների մի տասյերորդական մասի կամ վերաստուգիչ հանձնաժողովի պահանջով:

Յեթի վարչությունը չը հրավիրի ընդհանուր ժողով, պահանջը հայտնվելու որից 2 շաբաթվա ընթացքում, այդ դեպքում հրավիրվում և վերստուգիչ հանձնաժողով կողմից: Անդամներին պետք է տեղեկացնել ընդհանուր ժողովին սրվա տեղի ու որակարգի մասին մի շաբաթ առաջ:

52. Ընդհանուր ժողովը կայացած և համարվում չերը ներկա չեն ընկերության բոլոր անդամների առնչվազն մի հինգերորդ մասը, իսկ չերը ժողովը հըրավիրվում և ընկերության լուծելու, անդամների պատասխանատվության չափը փոփոխելու, վնասները բաժանելու և կանոնադրությունը փոփոխության յենթավազն բոլոր ընկերների կես մասի ներկայությունը:

53. Յեթի այն որը, յետ նշանակված և ընդհանուր ժողովը, հող 52-ում նշանակված թվով անդամներ չեն հավաքվի, մի շաբաթից վոչ ուշ նշանակվում և յերկրորդ ընդհանուր ժողովը, վորը համարվում և կայացած, անկախ ներկա յեղողների թվից, բացի այն

ղեկաբերից, յերբ ընդհանուր ժողովն հրավիրվում է լուծելու ընկերութիւնը փակելու հարցերը. այս ղեկաբուրում յերկրորդ ընդհանուր ժողովին ներկա պետք է լինեն անդամների մի յերրորդ մասը:

54. Ընդհանուր ժողովը ընտրում է իր նախագահը և քարտուղարը: Ընկերները, վորոնք պատկանում են վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների կազմին, իրավունք չունեն նախագահելու:

55. Ընդհանուր ժողովում ընկերության ամեն մի անդամը ոգտվում է միայն մի ձայնի իրավունքով, բայց վորում այդ իրավունքը վոչ վոքի հանձնել չի կարելի:

56. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները մասնակցում են ընդհանուր ժողովին ընկերության մնացյալ անդամների հետ միասին համահավասար իրավունքներով, բայց առանց վճռական ձայնի իրավունք ունենալու, հետեյալ հարցերը քննահիս 1. իրանց գործունեութիւնը գնահատելիս, 2. հաշվետվութիւնները վաճիբացնելիս, 3. նրանց համար վարձատրութիւն նշանակելիս և 4. նրանց պատասխանական պատասխանատվության յենթարկելիս:

57. Կանոնադրութիւնը փոփոխելու, հատուկ գումարներ կազմելու նպատակով անդամների լրացուցիչ մուծումներ սահմանելու, անդամի պատասխանատվութիւնը փոփոխելու, ընկերության փակելու և անդամներին հեռացնելու վերաբերյալ վորոշումների համար պահանջվում է ժողովին ներկա յեղող անդամների կողմից. ձայների 2/3 մասը, իսկ մնացյալ գործերն ու հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ:

58. Ընդհանուր ժողովի վորոշումները մուծվում են հատուկ գրքի մեջ, ստորագրվում նախագահի և վար-

չության ներկա յեղող անդամների և առնվազն յերեք գրագետ անդամների կողմից: Ընդհանուր ժողովի որինական վորոշումները պարտագիր են ինչպես ներկա յեղող, այնպես և բացակայող բոլոր անդամների համար:

59. Ընդհանուր ժողովում ամեն մի անդամ իրավունք ունի առանձին կարծիք հայտնելու այս կամ այն հարցի լուծման առթիւ և պահանջել մտցնելու նրան ժողովի արձանագրության մեջ:

VIII. Խ Ո Ր Հ Ո Ի Ր Գ.

60. Խորհուրդը հսկում է, վորպեսզի վարչութիւնը ի կատարածի կանոնադրութիւնը, հրահանգները և ընդհանուր ժողովի վորոշումները: Այդ նպատակով խորհրդի առաջ պետք է բաց լինեն ընկերության գործերը ու ձեռնարկները, գրամարկղը, փաստաթղթերը, հաշվետվութիւնը և գործաւարութիւնը:

61. Մասնավորապես խորհրդի վրա պարտք է զբը վում

ա) վարչության մշակած կանոնների և զեկուցումների նախագծերի նախնական քննութիւնը ու նրանց մասին իր յեղրակացութիւնը ներկայացնել ընդհանուր ժողովին:


բ. վարչության դեմ տրված գանգատների քննելը:

գ. ընկերության կանոնադրութիւնը փոփոխության յենթարկելու հարցերի նախնական քննութիւնը և այլ պարտականութիւնները, վորոնք առանձնապես մատնանշված են ներկա կանոնադրության մեջ ու նրա ելութիւնից ել բխում են:

62. Վարչության գեմ յեղած գանգատների, նմանապես ընկերության գործերի, նախ ժամանակին

23893-60

23893-60



պարզված հանգամանքների առթիվ, խորհուրդը ցուց-
մունքներ և անուժ վարչությանը իրա կատարած ան-
կանոն կամ ընկերության կանոնադրությանը հակա-
սող վարմունքի համար, իսկ այն զեպքերում յերբ
նկատվում է եյական անկարգություններ կամ զեղ-
ծումներ ընկերության գործերում, դումարում և ար-
տակարգ ընդհանուր ժողով:

63. Խորհրդի անդամների կազմը վորոշում և
ընդհանուր ժողովը: Խորհրդի անդամը չի կարող ծա-
ուայել ընկերության մեջ վարձով:

64. Խորհուրդը հավաքվում է ըստ կարիքի, բայց
առնվազն ամսեկան մի անգամ: Առանձին ստուգողա-
կան աշխատանքները խորհուրդը կարող է հանձնել
իր անդամներին իր հայեցողությամբ: Իր բոլոր գոր-
ծողությունների և կարգադրությունների մասին խոր-
հուրդը արձանագրում է հատուկ գրքում:

65. Խորհրդի ղեմ յեղած գանգատները դրվում են
ընդհանուր ժողովին, խորհրդի իրա միջոցով, վորը
պարտավոր է ներկայացնել իր յեղրակացության հետ
միասին:

IX. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

66. Վերստուգիչ հանձնաժողովը կազմվում է վոչ
պակաս քան յերեք անդամից և յերկու անձնափո-
խանորդից, վորոնց ընտրում է ընդհանուր ժողովը մի
տարի ժամանակով:

67. Վերստուգիչ հանձնաժողովի պարսականու-
րյունն է:

ա. կատարել առնվազն տարեկան մի անգամ և
բացի դրանից, ըստ կարիքի, մանրամասն վերստու-
գություն գույքերի, դրամարկղի, տարեհաշվի և առ-
հասարակ ընկերության ամբողջ գործունեության:

բ. ներկայացնել ընդհանուր ժողովին իր յեղրա-
կացությունն ինչպես տարեկան հաշվետվության, այն-
պես և նախահաշվի մասին:

գ. ներկայացնել վերջին հաշիվ իր մի տարվա
գործունեության և ընդհանուր ժողովի արած ուրիշ
հանձնարարությունները կատարելու մասին:

68. Վերստուգիչ հանձնաժողովի ղեմ յեղած գա-
նատները ուղղվում են ընդհանուր ժողովի միայն
հանձնաժողովի միջոցով, վորը պարտավոր է իր
յեղրակացությամբ ներկայացնել առաջիկա ընդհանուր
ժողովին:

X. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.

69. Ընկերությունը այնպայման ունենում է հե-
տևվյալ գրքերը, ուր մուծվում են.

ա. Ընկերության բոլոր շրջանառությունների
ընդհանուր մուտքն և յեկքը դրամարկղի առձեռն գը-
րամի:

բ. Ընկերության ամեն մի շրջանառության մուտ-
քըն ու յեկքը առանձին առանձին:

գ. Ընկերության ամեն մի անդամի հետ, նույն-
պես հիմնարկությունների ու զանազան անձանց հետ
ունեցած հաշիվները:

դ. Կենդանի ու մեռյալ ինվենտարի ցուցակը:

70. Ընկերության հաշվետվության տարին հա-
մարվում է հոկտեմբերի 1-ից առ 30 սեպտեմբերի, յե-
թի ընկերությունը իր գործունեությունը սկսել է
տարվա ընթացքում, այդ զեպքում առաջին հաշվե-
տվության տարին համարվում է նրա գործողություն
ները սկսվելու օրից առ 30 սեպտեմբերի:

71. Նախքան հաշվետվությունն ընդհանուր ժո-
ղովին ներկայացնելը՝ գրքերը ու փաստաթղթերը քնը

նվում են վերատուգիչ հանձնաժողովի կողմից, վորը հենց նրա վերա գրում է իր յեղրակացությունը ու միասին ներկայացնում հերթական ընդհանուր ժողովին:

72. Տարեհաշիվը ստուգված և վավերացրած պետք է լինի վերատուգիչ հանձնաժողովի անդամների կողմից ընդհանուր ժողովից վոչ ուշ քան յերկու շաբաթ առաջ: Ընդհանուր ժողովի կողմից հաստատված հաշվետվությունը պահվում է ընկերության գործերում:

XI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՔՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ.

73. Զուտ ոգուտը, նրանից պահեստի զբաղադրիչ բաժինը հատկացնելուց հետո, համաձայն հոդ. 32-ի, գրվում է ընդհանուր ժողովի տրամադրության ներքո, վորը կարող է գործադրել նրան հետևյալ նպատակների համար

ա. Հատկացնել հիմնական և հատուկ զբաղադրիչներին:

բ. Վճարել անդամներին իրեն գիվիդենտ շահարածին, բայց վոչ ավելի այն տոկոսից, վորը սահմանված կլինի փոխառվության համար պետական վարկային հաստատություններում:

գ. Գործադրել ընդհանուր կոոպերատիվային և հանրոգուտ նպատակների համար:

74. Ընկերության շրջանառություններից առաջացած վնասը ծածկվում է պահեստի զբաղադրիչ: Յեթե վնասը այդ միջոցով չի ծածկվիր, ընդհանուր ժողովիցն է կախված կամ փակել հաշիվը մյուս զբաղադրիչներին, կամ բաժանել բոլոր ընկերների մեջ ամեն մեկի վրա ընկնող պատասխանատվության չափի համեմատ, կամ թե անդամի ընկերության հետ ունեցած ընդհանուր շրջանառության գումարի հարաբերությամբ:

75. Անդամին գիվիդենտ վճարելու համար նշանակվում է ժամանակամիջոց վոչ ուշ քան մինչև տարվա փոքր:

XII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓԱԿՈՒՄԸ

76. Ընկերությունը փակվում է.

1. Ընկերության անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ:

2. Ընկերությունը մանկանալու գեպքում, և 3. այն գեպքում, յերբ ընկերության անդամների թիվը 15-ից պակաս լինի, այդ գեպքում վարչությունը անմիջապես հրավիրում է ընդհանուր ժողով, վորը վորոշում է կայացնում ընկերությունը փակելու մասին: Ընկերության փակումը տեղի յե ունենում Հայաստանի Գյուղատնտեսական կոոպերատիվների Միության «Գյուղմիության» գիտությամբ:

79

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]



2013

« Ազգային գրադարան »

985
586



NL0044690

18.

35-

—

11

